ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2022թ. ապրիլի 1

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպություն
Նելի Դոնոյան	««Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարարական կազմակերպություն
Սոնա Բալդրյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Անի Գաբրիելյան	«Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ

Հայկուհի Թովմասյան	ֆիզիկական անձ
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Տաթևիկ Ստեփանյան	նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	նախարարի տեղակալ
Դավիթ Խաչատրյան	նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	մամուլի խոսնակ

Բացակայում էր՝

Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտի քաղաքականության հակիրճ ներկայացում.

(Ներկայացնող՝ Խորհրդի նախագահ)

2. «Ծանոթացում. ոլորտային գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում.

(Զեկուցող՝ Խորհրդի անդամներ" ՀԿ ներկայացուցիչներ և անհատներ)

3. ՀՀ ԱՍՀՆ 2023-2025 թթ ՄԺԾԾ հայտերի, պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով, ինչպես նաև բյուջետային նոր նախաձեռնությունների ներկայացում

Զեկուցողներ՝

ԱՍՀ նախարար Նարեկ Մկրտչյան

ԱՍՀ նախարարի տեղակալներ՝

Տաթևիկ Ստեփանյան

Աննա Ժամակոչյան

Ռուբեն Սարգսյան

Դավիթ Խաչատրյան

4. Հարց ու պատասխան

Մինչ Խորհրդի նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց Խորհրդի մասնակիցներին՝ բարձրաձայնելով անդամներից յուրաքանչյուրի կողմից առաջարկություններ ներկայացնելու և ակտիվ մասնակցություն ցուցաբերելու կարևորության մասին:

Օրակարգի առաջին հարցի շրջանակում՝ Նախագահը տեղեկատվություն ներկայացրեց սոցիալական պաշտպանության ծրագրերի մասով 2023-2025 բյուջետային հատկացումների նախատեսվող աճերի վերաբերյալ՝ մատնանշելով նախարարության 2023

թվականի համար նախատեսված ծրագրերի ու միջոցառումների, 2023 թվականի նախնական բյուջեի հայտի և 2022 թ. հաստատված բյուջեի տարբերությունները:

Անդրադառնալով օրակարգի բուն թեմային՝ **ՄԺԾԾ 2023-2025թթ փաստաթղթերի քննարկմանը՝** Նախագահն առաջարկեց Խորհրդի անդամներին հարց ու պատասխանի ձևաչափով հնչեցնել հարցերն ու առաջարկները:

«Սատար» ՀԿ-ն, անդրադառնալով զինվորական հաշմանդամություն ձեռք բերած անձանց շրջանում առկա խնդիրներին, բարձրաձայնեց 90-ական թվականների պատերազմի ընթացքում հաշմանդամություն ձեռքբերած անձանց տրամադրված պրոթեզաօրթոպետիկ պարագաների և 44-օրյա պատերազմում նույն կարգավիճակն ունեցող անձանց տրամադրված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների որակական տարբերությունների վերաբերյալ իր մտահոգությունն՝ առաջարկելով իրականացնել կարիքի գնահատում, ինչի արդյունքում ձեռնարկել նաև միջոցներ՝ նախկինում տրամադրված ոչ բազմաֆունկցիոնալ պրոթեզները նոր և ժամանակակից պրոթեզներով փոխարինելու գործընթացն իրականացնելու նպատակով:

«**Սատար» ՀԿ**-ի առաջարկին ի պատասխան՝ փոխնախարար Տաթևիկ Ստեփանյանը նշեց խնդրին լիարժեք տեղեկացված լինելու մասին և տեղեկացրեց ՄՍԾ համապատասխան աշխատակիցների կողմից պարբերաբար կարիքի գնահատում իրականացնելու վերաբերյալ: Փոխնախարարը նշեց նաև, որ 90-ականներին հաշմանդամություն ձեռքբերած անձանց պրոթեզաօրթոպեդիկ պարագաները նորով փոխարինելու նպատակով՝ նախաձեռնվում են մի շարք օրենսդրական փոփոխություններ, ինչի արդյունքում խնդրիրը կստանա իր հանգուցալուծումը:

Խորհրդի Նախագահը հավելեց, որ խնդրի կարգավորմանը խոչընդոտում է նաև մասնագիտական ներուժի պակասը և հավելեց, որ որոշ դեպքերում անգամ անհրաժեշտ է եղել մասնագետներ հրավիրել արտերկրից:

«Սատար» ՀԿ-ի ներկայացուցիչը բարձրաձայնեց նաև համայնքներում սոցիալական աշխատողների դերի բարձրացման անհրաժեշտության մասին:

Առաջարկին ի պատասխան՝ Խորհրդի Նախագահը նշեց, որ ՏԿԵՆ-ի հետ օրենսդրական փոփոխության մասով իրականացվում են քննարկումներ. խոշորացված համայնքներ ստեղծելու գործընթացին զուգահեռ նախատեսվում է քննարկել և միմյանց փոխլրացնելու նպատակով տարանջատել համայնքային սոցիալական աշխատողների և ՄՍԾ տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների գործառույթները:

Փոխնախարար Աննա ժամակոչյանը նշեց, որ նշված գործընթացի կայացման գործում մեծ կարևորություն ունի ՀԿ-ների ակտիվ մասնակցության դերակատարումը և հավելեց, որ ՄՄԾ կից համակարգող խորհրդի կազմում առկա են ՀԿ-ներ, ֆիզիկական անձինք, ովքեր, ըստ ՄՄԾ գործընկերների հնչեցրած կարծիքների, ակտիվ չեն, տունայցեր չեն կատարում:

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի ներկայացուցիչը նշեց, որ կան տարեցներ, ովքեր չեն համապատասխանում խնամքի ծառայություններում շահառու հանդիսանալու համար նախատեսված չափորոշիչներին, սակայն կարիք ունեն խնամքի հաստատությունում տեղավորվելու: Նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը պատասխանեց, որ նմանօրինակ դեպքերի մասին նախարարությունը քաջատեղյակ է, և նման կարգավիճակ ունեցող անձնանց խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով՝ անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական համապատասխան փոփոխություններ, մասնավորապես՝ առողջապահության նախարարության կողմից սահմանված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկի փոփոխություն:

Ֆիզիկական անձ, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ Տաթևիկ Կարապետյանը (այսուհետ՝ Փորձագետ) ներկայացրեց ԱՍՀՆ միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մասին նախապես իր կողմից ուղարկված առաջարկների փաթեթից մի քանի կետ. մասանավորապես վերջինս ներկայացրեց առաջարկություն «1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11011 Հոգեկան առողջության Խնամքի ծառայության շահառուների ցանկում ներգրավել նաև 44-օրյա պատերազմում գերեվարված և հայրենիք վերադարձած անձանց:

Փորձագետը նշեց նաև, որ 44-օրյա պատերազմի նշված մասնակցիները բախվում են որոշակի խնդիրների զբաղվածության ոլորտում: Վերջինիս ունեցած տվյալների համաձայն՝ կան շատ զինծառայողներ, ովքեր, բարոյահոգեբանական վիճակից ելնելով, չեն կարողանում վերադառնալ նախկին աշխատանքին: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկություն ներկայացվեց՝ նոր միջավայրում նոր աշխատատեղով ապահովելու նպատակով նրանց ներգրավել զբաղվածության ծրագրերում:

Ի պատասխան հնչեցված առաջարկին՝ փոխնախարար Ռուբեն Սարգսյանը նշեց, որ 2023թ-ի համար նախատեսված զբաղվածության ծրագրերում, մասնավորապես՝ ձեռներեցության ծրագրում, հատուկ ուշադրության են արժանացել 44-օրյա պատերազմի

մասնակիցներն ու պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռքբերած անձիք, ովքեր ծրագրի շրջանակում կարող են ուսուցում անցնել և տեղավորվել աշխատանքի:

Բացի վերոնշյալ առաջարկներից, **Փորձագետի** կողմից ներկայացվեց առաջարկություն՝ բնակարանային ապահովում ծրագրում ներառել աղետի գոտում բնակարանային իրավունքը դատական կարգով չվերականգնված ընտանիքներին և ոչ հիմնական շինություններում (տնակներում) բնակվող անձանց:

Առաջարկին ի պատասխան՝ փոխնախարար Աննա Ժամակոչյանը նշեց, որ հաշվի առնելով Քաշաթաղի բնակիչների բնակարանային ապահովության ծրագրի գործարկման փորձը՝ պլանավորվում է մշակել կացարանի տրամադրման նոր ծրագիր: Ընդ որում, ծրագիրը նախատեսվում է իրականացնել ոչ թե բնակարանիշության, այլ հիպոթեքային վարկի ձեռքբերման եղանակով, քանի որ Քաղաքաշինության կոմիտեի գործընկերների դիտարկման համաձայն՝ ՀՀ-ում առկա են արդեն իսկ կառուցված բնակարաններ և անհրաժեշտ է խթանել դրանց գնման գործընթացը:

Խորհրդի Նախագահն Աննա Ժամակոչյանին առաջարկեց Փորձագետի կողմից վերը ներկայացված առաջարկն ընդգրկել Փոխվարչապետի մոտ առաջիկա քննարկման թեմաների ցանկում:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն շնորհակալություն հայտնեց համագործակցության համար և հարցադրման տեսքով խնդրեց հստակեցնել, թե Միգրացիոն ծառայության ինտեգրման ծառայությունները ԱՍՀՆ-ին փոխանցվելու դեպքում 2023-2025թթ ՄԺԾԾ ծրագրում իրականացվելու են արդյոք բյուջետային հատկացումներ՝ փախստականների շրջանակում իրականացվելիք ծառայությունների մատուցման գործընթացներն ապահովելու նպատակով:

Ա. Ժամակոչյանը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ ծառայությունների մատուցման գործընթացը ներկայումս գտնվում է Միգրացիոն ծառայության իրավասության շրջանակում՝ բյուջեի հատկացումներ իրականացնելու իրավական հիմքերը ներկայումս բացակայում են և ԱՍՀՆ-ին փոխանցվելու դեպքում միայն անդրադարձ կկատարվի նշված հարցին:

««Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարարական կազմակերպության կողմից բարձրաձայնվեց Արցախից տեղահանվածների շրջանում պարենային ապրանքների պահանջարկին առնչվող խնդիրների մասին: Նշվեց նաև, որ անցած տարի պարենային ապրանքներ, մասնավորապես՝ կարտոֆիլի սերմացու են

փոխանցել գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացող մի շարք արցախցիների և հավելեց, որ ներկայումս կա կարտոֆիլի սերմացուի համար 5000 դիմող:

Խորհրդի նախագահը նշեց, որ պարենային խնդիրների կարգավորմանն ուղղված միջոցառումները գտնվում են ՀՀ Կառավարության ուշադրության կենտրոնում: Սույն հանգամանքով պայմանավորված՝ Նախագահն առաջարկեց ԱՍՀՆ-ին փոխանցել գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացող դիմողների ցանկը՝ վերջիններիս գործունեությանն օժանդակելու նպատակով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ